«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

**Մասնագիտությունը**

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

**Մոդուլի անվանումը՝**

«Անվտանգություն և առաջին օգնություն»

## Դասընթաց1.Աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնների ներկայացում

### Թեմա1.1Անվտանգության կանոնների սահմանման իրավական կարգավորման և պահպանման անրաժեշտությունը

### Թեմա1.2 Անվտանգության կանոնների պահանջները ըստ հիմնական բնակավառների

Աշխատանքային իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունները կոչվում են աշխատանքային իրավահարաբերություններ: Վերջիններս կազմում են համակարգ, որը բնորոշվում է ներքին միասնությամբ:

Աշխատանքային իրավունքի ոլորտում իրավահարաբերությունների համակարգը ներառում է.
ա) աշխատանքային իրավահարաբերություններ, բ) կազմակերպակառավարչական իրավահարաբերություններ, գ) զբաղվածության ապահովման իրավահարաբերություններ, դ) աշխատողների մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման իրավահարաբերություններ,

ե) աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության վերաբերյալ նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողությունը կարգավորող իրավահարաբերություններ,

զ) աշխատանքային վեճերի քննարկումը կարգավորող իրավահարաբերություններ:

Նշված համակարգում առաջնային նշանակություն ունեն աշխատանքային իրավահարաբերությունները: Մյուսները, որ վերջիններիս հարաբերում են իբրև նախորդող կամ բխող իրավահարաբերություններ, ունեն ածանցյալ նշանակություն: Առանց աշխատանքային իրավա հարաբերությունների դրանք ինքնուրույն նշանակություն չունեն և գոյություն ունեն այնքանով, որքանով աշխատանքային իրավահարաբերությունները եղել են, կան, կլինեն:

Աշխատանքային իրավահարաբերությունները ծագում են քաղաքացու (աշխատողի) և գործատուի միջև կնքվող աշխատանքային պայմանագրի ուժով: Այդ պայմանագրով աշխատողը պարտավորվում է, ենթարկվելով գործատուի կողմից սահմանված ներքին աշխատանքային կարգապահական կանոններին, կատարել որոշակի տեսակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, մասնագիտացման և որակավորման, իսկ գործատուն պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձ և ապահովել աշխատանքի անվտանգ պայմաններ:

Աշխատանքային իրավահարաբերություններն ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնցով նրանք տարբերվում են աշխատանքի կիրառման հետ կապված մյուս իրավահարաբերություններից:

Նախ, աշխատանքային իրավահարաբերության միջոցով քաղաքացիները ներգրավվում են աշխատավորական կոլեկտիվի մեջ:

Երկրորդ, այդ իրավահարաբերությունների օբյեկտը որոշակի տեսակի աշխատանքի կատարումն է կոնկրետ մասնագիտության, մասնագիտացման և որակավորման շրջանակներում:

Երրորդ, դրանց սուբյեկտների (մասնակիցների) վարքագիծը սահմանվում է ձեռնարկության ներքին աշխատանքային կարգապահության կանոններով:

Բացի այդ, աշխատանքային իրավահարաբերություններն ունեն բացառապես հատուցանելի բնույթ, այսինքն այս բնույթի աշխատանքները միշտ պետք է վճարվեն:

Աշխատանքային իրավահարաբերությունները, մյուս իրավահարաբերությունների նման, ունեն իրենց օբյեկտը և բովանդակությունը:

Աշխատանքային իրավահարաբերությունների օբյեկտը, ինչպես արդեն նշել ենք, որոշակի տեսակի աշխատանքի կատարումն է, դրա բուն ընթացքը: Աշխատանքային իրավահարաբերությունների սուբյեկտներն այդ հարաբերությունների այն մասնակիցներն են, որոնք ունեն սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ: Նշված իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը կազմում է քննարկվող իրավահարաբերությունների բովանդակությունը:

**Հարցեր**

1.Որո՞նք են աշխատանքային իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունները:

2. Մեկնաբանեք աշխատանքային պայմանագիր հասկացությունը որպես աշխատանքային իրավահարաբերության ծագման հիմք:

## Թեմա1.3 Տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները

Ձեռնարկություններում և արտադրամասերում լայնորեն օգտագործվում են անոթներ, սարքեր, հաստոցներ, կոմունիկացիաներ, որոնք աշխատում են ճնշման տակ, որոնք պայթյունավտանգ են: Այդ սարքավորումների պայթելու պատճառ կարող է հանդիսանալ մեխանիկական ամրության կորուստը, կոռոզիան, տեղային գերտաքացումը, հարվածը և այլն: Ճնշման տակ աշխատող սարքերի աշխատանքի անվտանգությունը և վթարային ազդանշանային համակարգի անխափան աշխատանքը ապահովելու համար նախատեսված է վթարային փականներ, կափույրներ, ճնշման չափիչ ր կարգավորիչ սարքեր և այլն: Գազաբալոններից սեղմված գազը դուրս է թողնվում ավելի ցածր ճնշմամբ՝ ռեդուկտորների միջոցով: ռեդուկտորն ունի ճնշաչափ / մանոմետր / և ապահովիչ փական: Պահեստները և տեղափոխման համար նախատեսված մեքենաները պետք է կահավորված լինեն հակահրդեհային պահանջներով, գազաբալոնները չպետք է գտնվեն արևի ճառագայթների տակ, կայծից, կրակից հեռու լինեն և պետք է ապահովված լինեն օդափոխության հարմարանքներով:

**Գործնական աշխատանք՝** ծանոթացում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի պահանջներին՝ ուսումնարանի արհեստանոցներում:

## Թեմա1.4 Հրդեհային անվտանգության նհակահդեհային պաշտպանության կանոնները

### Հակահրդեհային պաշտպանության կանոնները

Այն չվերահսկվող այրումը, որն ուղեկցվում է նյութական արժեքների աչնչացմամբ և կարող է սպառնալ մարդկանց կյանքին և առողջությանը, կոչվում է հրդեհ:

Հրդեհները գնահատվում են 5 բալանոց սանդղակով: Կախված բռնկման վայրից լինում են 3 տեսակի հրդեհներ.

- տնտեսական
- արտադրական
- բնական:

Հրդեհի բաղկացուցիչ մասերն են.

- կրակ
- ծուխ
- մոխիր:

Հրդեհին նպաստող հիմնական գործոններն են՝

- բաց կրակ
- կայծ
- ծուխ
- ջերմային բռնկում
  թունավոր գազ:

Հրդեհի պատճառները շատ հաճախ լինում են տեխնոլոգիական ռեժիմների խախտումը, էլեկտրասարքավորումների և հանգույցների անսարքությունը, կայծը, կրակի հետ անզգույշ վարվելը, ինքնահրկիզումը,կայծակի հարվածը և այլն:

Հրդեհի մարման միջոցները սկզբնական փուլում հանդիսանում են կրակմարիչները, ավազը, ներքին հակահրդեհային ջրի ծորակները և տարաները և քանդման գործիքները /քլունգ, լինգ, կացին, բահ/:

**Ինչ անել...**

- **հրդեհի ժամանակ**

1. Շտապ ահազանգել հրշեջ ծառայություն կամ 911:
2. Երբ հրդեհը նոր է բռնկվել այն կարելի է հանգցնել քիչ ջրով, ավազով, խոնավ խիտ ծանր ծածկոցով:
3. Եթե չեք կարող հանգցնել հրդեհը, ամենակարճ ճանապարհով լքել շինությունը:
4. Հրդեհի դեպքում չի կարելի օգտվել վերելակից:
5. Եթե շինությունն արդեն լցված է ծխով, ապա դուրս գալուց առաջ բերանը և քիթը փակել խոնավ թաշկինակով, դեմքը պահել հատակին մոտ, ծխի մուտքը դադարեցնելու համար դռան ճեղքերը փակել թաց գործվածքով /եթե չեք կարող լքել շինությունը/:
6. Եթե բռնկվել է հագուստը ապա հիշել «կանգնի՛ր, ընկի՛ր և գլորվի՛ր» սկզբունքը, դադարեցնել ցանկացած գործողություն, ընկնել հատակին, գլորվել մինչև կրակի հանգչելը:
7. Յուրաքանչյուր դուռ բացելուց առաջ պետք է շոշափել ձեռքի ափով և ստուգել դռան տակից դուրս եկող օդը. եթե դուռը տաք է, այն չի կարելի բացել, կրակը մոտ է:

- **հրդեհից հետո**

1. Տուժածին դուրս բերել անվտանգ տեղ ու նոր միայն առաջին օգնություն ցուցաբերել:
2. Ահազանգել շտապ օգնության ծառայություն 911:
3. Այրվածք ստացած մարմնի հատվածները սառեցնել միայն հոսող ջրով:Վարակումից խուսափելու համար չի կարելի այրվածքի վրա դնել այլ հեղուկներ/ձեթ, մածուն և.../
4. Տուժածին տալ հետևյալ հեղուկից՝ 1լիտր ջրին 1թ, գդ. աղ և 3-4 թ. գդ. շաքարավազ:

## Հարցեր

1. Թվարկել հրդեհի առաջացման հավանական պատճառները/նպաստող գործոններ/:

_____
_____

2. Թվարկել անհրաժեշտ առաջին քայլերը՝ հրդեհի դեպքում:

_____
_____

3. Ի՞նչ անել հրդեհից հետո:

_____
_____

## Թեմա1.5 Էլեկտրաանվտանգության կանոնները

### Էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը

Շինություններն ըստ իրենց անվտանգության աստիճանի բաժանվում են երեք խմբի.

ա. անվտանգ, բ. վտանգավոր, գ. խիստ վտանգավոր շինություններ

Անվտանգ են համարվում այն շինությունները, որոնք չոր են, օդի ջերմաստիճանը 15-20 աստիճան է, հատակը պատրաստված է էլեկտրամեկուսիչ նյութերից, չունեն բարձր լարման հոսանքի աղբյուրին միացված էլ. Սարքեր / բնակարան, գրասենյակ և այլն/: Վտանգավոր են համարվում խոնավ /ինչպես նաև չոր, որտեղ կարող են գոլորշու արտանետումներ լինել/ շինություններ, որտեղ առկա են հոսանքահաղորդիչ փոշիներ և բարձր լարում:
Խիստ վտանգավոր են համարվում շինությունները, որտեղ մշտապես առկա է խոնավությունը, պատերը, առաստաղը, հատակը ծածկված են ջրի կաթիլներով, կամ շինություններ, որտեղ քամին անընդհատ խոնավություն և ջրային գոլորշիներ է բերում /տեքստիլ արդյունաբերության, ներկման արտադրամասեր և այլն/: Էլեկտրահարման դեպքում անհրաժեշտ է անմիջապես հեռացնել հաղորդալարը, և եթե մարդը կորցրել է գիտակցությունը ու չի շնչում, ապա մարդ ուղարկել բժշկին կանչելու և իրականացնել արհեստական շնչառություն:

**Հարցեր**

1.Թվարկել շինությունների անվտանգության աստիճանները:

_____

_____

2.Ո՞ր շինություններն են համարվում անվտանգ:

_____

_____

3.Ո՞ր շինություններն են համարվում խիստ վտանգավոր:

_____

_____

4.Ի՞նչ պետք է անել էլեկտրահարման դեպքում:

_____

_____

## Թեմա1.6 Անվտանգության կանոնների խախտման հետևանքները,պատասխանատվությունները

### Աշխատանքի պաշտպանության ներքին նորմատիվային փաստաթղթերը, և պատասխանատվությունը՝ նորմերի խախտման դեպքում

Ինչպես արդեն նշել ենք, աշխատողն ու գործատուն աշխատանքային հարաբերություններին մասնակցելիս օժտվում են բազմաթիվ իրավունքներով և կրում են մի շարք պարտականություններ: Ե՛վ աշխատողը, և գործատուն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են պահպանել օրենքները և իրենց իրավունքներն ու պարտականություններն իրականացնել օրենքի պահանջներին համապատասխան:

Երբեմն աշխատանքային իրավահարաբերության հիմնական սուբյեկտների, այսինքն աշխատողի և գործատուի միջև առաջանում են որոշ տարաձայնություններ: Օրինակ աշխատողը չի համաձայնվում իր աշխատավարձի նվազեցման, աշխատանքի վայրի փոփոխման, իրեն աշխատանքից ազատելու և ադմինիստրացիայի այլ գործողությունների հետ: Այդպիսի դեպքերում

տեղի է ունենում աշխատողի և գործատուի շահերի բախում և առաջանում են աշխատանքային տարաձայնություններ։ Երբեմն կողմերը կարողանում են անմիջական բանակցություններով լուծել առաջացած տարաձայնությունը, և նրանց միջև աշխատանքային վեճը կանխվում է։ Դա, սակայն, միշտ չէ, որ հաջողվում է նրանց։ Հաճախ աշխատողի և գործատուի միջև ծագած տարաձայնությունը մնում է անլուծելի և առաջանում է ***աշխատանքային վեճ (կոնֆլիկտ),*** որի լուծման իրավունքը օրենքով վերապահված է որոշ մարմինների։ Կախված այն հանգամանքից, թե ինչպիսի աշխատողի հետ և ինչ հարցի շուրջ է ծագել աշխատանքային վեճը, դրա լուծման համար լիազորված մարմինները տարբեր են։ ***Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի աշխատանքային վեճեր քննելու իրավունք ունեն.***

1) ***աշխատանքային վեճերի հանձնաժողովները (ԱՎՀ),***
2) ***արհմիութենական կոմիտեները (շրջանայինից ոչ ցածր),***
3) ***դատարանը։***

Աշխատանքային վեճեր քննող սկզբնական մարմինը աշխատանքային վեճերի հանձնաժողովն է:Այն կազմվում է15 անդամից ոչ պակաս աշխատավորական կոլեկտիվ ունեցող ձեռնարկություններում աշխատողների կողմից:Աշխատողն իր խախտած իրավունքի պաշտպանության համար կարող է աշխատանքային վեճերի հանձնաժողով դիմել:

Աշխպատանքային վեճերի հանձնաժողովը պարտավոր է աշխատողի դիմումը գրանցել, քննարկել և 10-օրյա ժամկետում լուծել աշխատանքային վեճը։ Աշխատանքային վեճերի հանձնաժողովի որոշումը, որը կայացվել է օրենքի շրջանակներում, ունի պարտադիր ուժ և ենթակա է կատարման։ Եթե աշխատողը կամ գործատուն (ադմինիստրացիան) համաձայն չեն աշխատանքային վեճերի հանձնաժողովի որոշման հետ, ապա այն կարող են գանգատարկել արհմիութենական կոմիտե։ Վերջինս պարտավոր է յոթնօրյա ժամկետում քննել և լուծել աշխատանքային վեճը։ Արհմիութենական կոմիտեն կարող է բեկանել աշխատանքային վեճերի հանձնաժողովի որոշումը կամ այն թողնել անփոփոխ։ Եթե կողմերը համաձայն չեն արհմիութենական կոմիտեի որոշման հետ, ապա կարող են դրա կայացման պահից 10 օրվա ընթացքում այն գանգատարկել դատարան։ Դատարանը աշխատանքային վեճեր քննում է երկու եղանակով.

ա) որպես վերջնական մարմին աշխատանքային վեճերի հանձնաժողովից և արհկոմից հետո,

բ) անմիջականորեն որպես վեճի լուծման սկզբնական մարմին։

Որոշ ընտրովի, նշանակովի և այլ աշխատողների (օրինակ նախարարների) մասնակցությամբ աշխատանքային վեճերը քննվում են վերադաս մարմինների կողմից։ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն որոշ աշխատանքային վեճեր (աշխատողի համար աշխատանքի նոր պայմաններ սահմանելու կամ գոյություն ունեցող պայմանները փոփոխելու վերաբերյալ վեճերը) լուծվում են ադմինիստրացիայի և արհկոմի կողմից համատեղ։

Պետք է նշել, որ ներկայումս, հատկապես մասնավոր ձեռնարկություններում, արհմիութենական կոմիտեներ չկան և աշխատանքային վեճերի այս կարգով քննության ժամանակ աշխատողների իրավունքները երաշխավորված չեն։ Այդ իսկ պատճառով պետք է շեշտը դնել նրանց իրավունքների դատական պաշտպանության վրա։ Այս մոտեցումն արտահայտված է ՀՀ Սահմանադրության մեջ, որն ավելի է ամրապնդում դատարանի դերը աշխատողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործում։

## Հարցեր

1. Ի՞նչ կարգավիճակ ունի գործատուն որպես աշխատանքային պայմանագրի կողմ։
2. Ի՞նչ է աշխատանքային վեճը և որո՞նք են դրա առաջացման պատճառները։
3. Ո՞ր մարմիններն են օժտված աշխատանքային վեճեր քննելու իրավունքով։
4. Ի՞նչ դեր ունի դատարանը քաղաքացիների աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում։

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### *Հոդված 1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունները*

1. Սույն օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

2. Աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:

### *Հոդված 2. Աշխատանքային օրենսդրության նպատակը*

1) սահմանել ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ քաղաքացիներ) աշխատանքային իրավունքների եւ ազատությունների պետական երաշխիքները.

2) նպաստել աշխատանքի բարենպաստ պայմանների ստեղծմանը.

3) պաշտպանել աշխատողների եւ գործատուների իրավունքներն ու շահերը:

### *Հոդված 3. Աշխատանքային օրենսդրության սկզբունքները*

1. Աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են՝

1) աշխատանքի ազատությունը, ներառյալ՝ աշխատանքի իրավունքը (որը յուրաքանչյուրն ազատորեն ընտրում է կամ որին ազատորեն համաձայնում է), աշխատանքային ունակությունները տնօրինելու, մասնագիտության եւ գործունեության տեսակի ընտրության իրավունքը.

2) ցանկացած ձեւի (բնույթի) հարկադիր աշխատանքի եւ աշխատողների նկատմամբ

բռնությունների արգելումը.

3) աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից եւ ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից.

4) յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովումը

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### *Հոդված 1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունները*

1. Սույն օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

2. Աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:

### *Հոդված 2. Աշխատանքային օրենսդրության նպատակը*

Աշխատանքային օրենսդրության նպատակն է՝
1) սահմանել ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ քաղաքացիներ) աշխատանքային իրավունքների եւ ազատությունների պետական երաշխիքները.
2) նպաստել աշխատանքի բարենպաստ պայմանների ստեղծմանը.
3) պաշտպանել աշխատողների եւ գործատուների իրավունքներն ու շահերը:

### *Հոդված 3. Աշխատանքային օրենսդրության սկզբունքները*

**1**. Աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են՝
1) աշխատանքի ազատությունը, ներառյալ՝ աշխատանքի իրավունքը (որը յուրաքանչյուրն ազատորեն ընտրում է կամ որին ազատորեն համաձայնում է), աշխատանքային ունակությունները տնօրինելու, մասնագիտության եւ գործունեության տեսակի ընտրության իրավունքը.

2) ցանկացած ձեւի (բնույթի) հարկադիր աշխատանքի եւ աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը.
3) աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից եւ ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից.



4) յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովումը
(ներառյալ՝ անվտանգության ապահովման եւ հիգիենայի պահանջները բավարարող պայմանները, հանգստի իրավունքը).
5) աշխատողների իրավունքների եւ հնարավորությունների հավասարությունը.
6) յուրաքանչյուր աշխատողի՝ ժամանակին եւ ամբողջությամբ աշխատանքի արդարացի վարձատրության իրավունքի ապահովումը՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից ոչ ցածր.
7) գործատուների եւ աշխատողների՝ աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպանության համար ազատորեն միավորվելու իրավունքի ապահովումը (ներառյալ՝ արհեստակցական եւ գործատուների միություններ ստեղծելու կամ դրանց անդամագրվելու իրավունքը).
8) աշխատանքային հարաբերությունների կայունությունը.
9) կոլեկտիվ բանակցությունների ազատությունը.
10) կոլեկտիվ եւ աշխատանքային պայմանագրերի կողմերի պատասխանատվությունը՝ ըստ իրենց պարտականությունների:

**2.** Պետությունն ապահովում է աշխատանքային իրավունքների իրականացումը՝ սույն օրենսգրքի եւ այլ օրենքների դրույթներին համապատասխան: Աշխատանքային իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների եւ ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

## Արդյուք 2.Կենցաղի և աշխատանքի կազմակերպում սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան

### Թեմա2.1 Մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները

**Ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները**

Հրդեհները հաճախ ուղեկցվում են պայթյունով, կամ կարող է տեղի ունենել հակառակը՝ պայթյուններից առաջանալ հրդեհներ:

Սահմանափակ ծավալում մեծ քանակությամբ էներգիայի ակնթարթային անջատումը կոչվում է պայթյուն, որը խիստ տաքացած և շատ բարձր ճնշում ունեցող գազ է առաջացնում /պլազմա/ և ընդարձակվելիս քայքայիչ մեխանիկական ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա:

Ձեռնարկություններում օգտագործվում են սարքեր, հաստոցներ, կոմունիկացիաներ, որոնք աշխատում են ճնշման տակ, որոնք պայթյունավտանգ են։

Պայթյուններն հիմնականում առաջանում են.

- ✓ քիմիական էներգիայի անջատումից /պայթուցիկ նյութեր/
- ✓ ներքին ատոմային էներգիայից /ատոմային պայթյուն/
- ✓ մեխանիկական էներգիայից
- ✓ սեղմված գազի էներգիայից /գազատար խողովակ գազի բալոնի ճնշման մեծացում/
- ✓ էլեկտրամագնիսական էներգիայից /կայծակ/։

**8**

***Գազի արտահոսք կարող է լինել՝***

- ✓ երբ գազօջախի բոցը հանգչում է հեղուկից կամ քամուց,
- ✓ մեխանիկական անսարքությունների կամ միացումների վնասվածքների ատճառով։

***Գազի արտահոսքի ժամանակ՝***

- ✓ կրակ չվառել
- ✓ չմիացնել և չանջատել լուսավորման և էլեկտրական սարքավորումներ
- ✓ շնչուղիները փակել շորով
- ✓ բացել պատուհանները / օդափոխել տարածքը/
- ✓ կանչել վթարային ծառայություն՝ 911։

Գազաբալոններից սեղմված գազը դուրս է թողնվում ավելի ցածր ճնշմամբ՝ ռեդուկտորների միջոցով։ ռեդուկտորն ունի ճնշաչափ / մանոմետր / և ապահովիչ փական։

Պահեստները և տեղափոխման համար նախատեսված մեքենաները պետք է կահավորված լինեն հակահրդեհային պահանջներով, գազաբալոնները չպետք է գտնվեն արևի ճառագայթների տակ, կայծից, կրակից հեռու լինեն և պետք է ապահովված լինեն օդափոխության հարմարանքներով։

**Հարցեր**

1. Թվեք այն պատճառները, որոնք հանգեցնելու են ճնշման տակ աշխատող սարքերի պայթելուն։
2. Ինչպե՞ս են սեղմված գազը դուրթս թողնում գազաբալոնից։
3. Թվարկեք պահեստների և մեքենաների կահավորանքը՝ որոնք տեղափոխելու են գազաբալոններ։

**Թեմա2.2 Աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմեր/միկրոկլիմա,Ճառագայթում,լուսավորվածություն,տատանումներ և այլն/**

**Թեմա2.3 Աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը**

**Թեմա2.4Սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները**

Աշխատանքի պայմանները, ձևավորվելով տարբեր տեսակի գործոնների ազդեցության տակ, իրենցից ներկայացնում են մարդու վրա տարբեր կերպ ազդող գործոնների մի ամբողջականություն: Աշխատանքի պայմանների բոլոր գործոնները կարելի է բաժանել 4 խմբի՝

1.Սանիտարահիգիենիկ
2,Հոգեֆիզիոլոգիական
3.Սոցիալ-հոգեբանական
4.Էսթետիկ

Սանիտարահիգիենիկ գործոններ: Իր անվանումը ստացել է՝ կապված նրա հետ,վոր այս խմբի տարրերը նորմավորվում և քանակապես գնահատվում են սանիտարահիգիենիկ ուսումնասիրությունների մեթոդներով: Այս խմբի մեջ են մտնում՝ միկրոկլիման(օդի ջերմաստիճան, օդի խոնավություն, օդի շարժումը), օդային միջավայրի վիճակը (օդային միջավայրի մաքրություն), լուսավորությունը ,արտադրական ճառագայթումը, աղմուկը, վիբրացիան: Համարյա բոլոր տարրերը, որոնք մտնում են այս խմբի մեջ, նորմավորվում են ստանդարտների, սանիտարական նորմերի և պահանջների ճանապարհով: Այս խմբի մեջ են մտնում՝



1. օդի ջերմաստիճանը, որը բարձր է 20՛- 22՛C-ից, իջեցնում է աշխատունակությունը 2- 4%-ով՝ ամեն 1՛C բարձրանալու դեպքում, իսկ 30՛C ջերմաստճանից սկսած՝ ամեն 1՛C բարձրանալու դեպքում՝ 4 - 6% -ով: Այս դեպքում նկատվում է աճող թուլություն, գլխապտույտ, գլխացավ, աղմուկ ականջներում , գունային ընկալման աղավաղում, սրտխառնոց, մարմնի բարձր ջերմություն, շնչառությունը և պուլսը արագանում են, անոթային ճնշումը սկզբում բարձրանում է , հետո ընկնում; Բայց եթե նույնիսկ այդպիսի վիճակ չի էլ ստեղծվում, օրգանիզմի գերջերմացումը դրական է անդրադառնում մարդու ներվային համա կարգի և աշխատունակության վրա: ՈՒսումնասիրությունները ցույց են տվել, որ 30՛C ջերմաստիճանի և 80-90% խոնավության պայմաններում 5 ժամ մնալու դեպքում աշխատունակությունը նվազում է 62%-ով, զգալիորեն նվազում է ձեռքի մկանային ուժը ( 30 - 50% ), իջնում է դիմացկունությունը, մոտավորապես 2 անգամ վատանում է շարժումների կոորդինացման ունակությունը: Ցածր ջերմաստիճանի երկար և ուժեղ ազդեցությունը կարող է մարդու օրգանիզմում առաջ բերել ոչ բարենպաստ փոփոխություններ: Օրգանիզմի տեղային և ընդհանուր սառելը շատ հիվանդությունների պատճառ է հանդիսանում: Ցանկացած տեսակի սառեցումը բնութագրվում է սրտի կծկումների հաճախականության իջեցմամբ և գլխուղեղի կեղևում արգելակման պրոցեսների զարգացմամբ, ինչը տանում է աշխատունակության իջեցման:

2. օդի խոնավությունը որոշվում է նրանում պարունակվող ջրային գոլորշիներով: Տարբերում են օդի բացարձակ, առավելագույն և հարաբերական խոնավություն: Բացարձակ խոնավությունը ջրային գոլորշիների այն զանգվածն է, որը տվյալ պահին պարունակվում օդի որոշակի ծավալում; Առավելագույն խոնավությունը տվյալ ջերմաստիճանի պայմաններում օդում ջրային գոլորշիների առավելագույն հնարավոր պարունակությունն է; Հարաբերական խոնավությունը որոշվում է բացարձակ խոնավության առավելագույն խոնավության հարաբերությամբ և արտահայտվում է %-ով; Ֆիզիոլոգապես օպտիմալ է համարվում հարաբերական խոնավությունը 40 - 60 %-ի սահմաններում: Օդի բարձր խոնավությունը (75 – 85 % և ավել) ցածր ջերմաստիճանի հետ միասին նպաստում է օրգանիզմի տաքացմանը: 25%-ից ցածր հարաբերական խոնավությունը նույնպես բացասաբար է ազդում մարդու վրա, որովհետև բերում է վերին շնչառական ուղիների էպիթելների պաշտպանական ֆունկցիայի թուլացմանը:

3.օդի շարժումը մարդը սկսում է զգալ դրա 0,1 մ/վ արագության դեպքում: Օդի սովորական ջերմաստիճանի պայմաններում օդի թեթև շարժումը նպաստում է լավ ինքնզգացողությանը: Օդի շարժման բարձր արագությունը հատկապես ցածր ջերմաստիճանի պայմաններում առաջացնում է օրգանիզմի շատ ուժեղ սառեցում:

**Հարցեր**

1.Թվարկեք աշխատանքի պայմանների գործոնների խմբերը:
2.Ի՞նչ կապ կա օդի ջերմաստճանի և մարդու աշխատունակության միջև:
3.Ինչպե՞ս է ազդում օդի խոնավությունը աշխատունակության վրա:
4.Օդի շարժումն ինչպե՞ս է ազդում մարդու վրա:

**Արդյունք 3.Հավանական վտանգների և վթարների կանխում,անվտանգության միջոցների իրականացում**

**Թեմա 3.1 Կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները**

**Թեմա 3.2 Արտադրական վթարների կանխման աշխատանքներ**

**Թեմա 3.3 Առանձին խմբերի(հաշմանդամություն ունեցողանձիք,հղիներ,անչափահասներ և այլն)աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները**



**Թեմա 3.4 Կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը**

**Արտադրական աղմուկ և ցնցում**

Աղմուկը նույնպիսի դանդաղ մարդասպան է, ինչպիսին են շրջակա միջավայրը աղտոտող քիմիական նյութերը: Աղմուկը համարվում է շրջակա միջավայրի ֆիզիկական ազդակներից առավել տարածվածը, որը բացասական ազդեցություն է թողնում մարդու առողջության վրա, առավելապես տուժում է լսողական օրգանը և նյարդային համակարգը:

Աշխատող մեքենա-սարքավորումների աշխատանքի ընթացքում առաջացած աղմուկը ունի վտանգավոր ազդեցություն՝ աշխատողի օրգանիզմի վրա: Բարձր աղմուկը ազդում է մարդու լսողական ապարատի վրա, թուլացնում է լսողությունը, ուշադրությունը, որը կարող է դժբախտ դեպքի պատճառ դառնալ:

Աղմուկը ազդում է ոչ միայն լսողության, այլ նաև կենտրոնական նյարդային համակարգի վրա, այսինքն ամբողջ օրգանիզմի վրա: Բարձր աղմուկից առաջացող օրգանիզմի խանգարումների արտաքին նշաններն են մաշկի գունատությունը, գլխացավերը, մարսողության խանգարումները: Տարբեր մասնագետների գնահատմամբ բարձր աղմուկը նվազեցնում է աշխատունակությունը 10-60%-ով: Աղմուկը պակասեցնելու համար կիրառվում են մի շարք մեթոդներ՝

ա. աղմուկի մեկուսացում, բ. աղմուկի խլացում, գ. աղմուկի էկրանավորում:

Աղմուկի թուլացումը տարածված միջոցառումներից մեկն է, որը կատարվում է մեկուսացնելով աղմուկի աղբյուրը: Ժամանակակից ձայնային մեկուսիչների կիրառումը հնարավորություն է տալիս զգալիորեն փոքրացնել աղմուկի մակարդակը:

Աղմուկի խլացումը շինություններում կատարվում է օդամեկուսիչ շերտի ստեղծումով: Աղմուկի խլացումը հաշվարկելիս ուշադրություն են դարձնում նյութերի ձայնի կլանման, անդրադարձման և

ձայնի հաղորդման ցուցիչներին:

Ձայնի էկրանավորումը իրականացվում է ակուստիկ էկրան ստեղծելով, այն դեպքում, երբ հնարավոր չէ կիրառել ձայնի խլացում: Ձայնային էկրանը իրենից ներկայացնում է սահմանափակ չափի և որոշակի ձայնամեկուսիչ հարմարանք, որը տեղադրվում է ձայնի աղբյուրի և պաշտպանվող տարածքի միջև:

Արտադրական ցնցումները նույնպես վատ են ազդում օրգանիզմի վրա և կարող են առաջացնել երկու տիպի հիվանդություն՝ ընդհանուր և տեղային:

Ընդհանուր հիվանդություններ առաջանում են ոչ մեծ պարբերությամբ ցնցումներով աշխատեղում աշխատելուց: 4-12 ամիս հետո կարող են առաջանալ գլխացավեր, տեսողության խանգարումներ, ջերմաստիճամի բարձրացում, լյարդի, մարսողական օրգանների, սիրտ-անոթային համակարգի խանգարումներ:

Տեղային հիվանդություններ կարող են առաջանալ օրգանիզմի առանձին հատվածներում պարբերաբար ցնցումների հետևանքով: Պարբերական ցնցումները ազդում են հյուսվածքների և ներքին օրգանների վրա: Դրա հետևանքով բարձրանում է արյան ճնշումը, խախտվում է մկանների և



ներքին օրգանների աշխատանքը, սիրտ անոթային համակարգը, ստամոքսա-աղիքային տրակտը: Իրենց բնույթով ցնցումները լինում են տեղային (ձեռքերի վրա) և ընդհանուր) ամբողջ աշխատատեղում): Ցնցումներից պաշտպանվելու համար կիրառում են ցնցման մեղմիչներ (ամորտիզատոր) : Որպես ամորտիզատոր օգտագործում են ռետին, մետաղյա զսպանակ և այլն:

**Արտադրական լուսավորությանը ներկայացվող պահանջները և նորմերը**

Լուսավորությունը չափվում է լյուքսերով( լք ):1լք հավասար է 1մԱ վրա 1 լումենի հավասարաչափ բաշխումը, իսկ լումենը լուսային հոսքի մեծությունն է , որի չափանիշ ընդունված է 1 մոմի արձակած լույսը:Աշխատանքի համար մեծ նշանակություն ունեն սուր տեսողությունը, պարզ տեսնելու տևողությունը, որոնք նշանակալի չափով կախված են լուսավորման աստիճանից: Լավ լուսավորությունը բարձրացնում է տոնուսը, ստեղծում է լավ տրամադրություն, բարելավում է ներվային համակարգի գործունեության հիմնական պրոցեսների ընթացքը:ց Կախված լուսապատկերային կազմությունից՝ լույսը կարող է ուժեղացնել տաքության զգացողությունը, կամ կարող է հանգստացնող ազդեցություն ունենալ, կամ ուժեղացնել արգելակիչ պրոցեսները: Ոչ բավարար լուսավորությունը, չափազանց մեծ լուսային կոնտրաստը առաջացնում են տեսողության լարվածություն, քնկոտության զգացում, ուշադրության նվազում և ընդհանուր հոգնածություն, ինչը արտահայտվում է մարդու աշխատունակության և նրա աշխատանքի արտադրողականության անկմամբ: Այսպես՝ հավաքման արտադրամասերում լուսավորության աճը 200-ից մինչև 800լք և 250-ից 600լք բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը համապատասխանաբար՝ 70,8 և 5,7%-ով: Լուսավորության բարձրացումը նույնիսկ այն դեպքում,երբ աշխատանքի գործընթացը կախված չէ տեսողական ընկալումից, նպաստում է աշխատունակության բարձրացմանը:Վատ լուսավորության ժամանակ մարդը շատ շուտ է հոգնում, աշխատում է ավելի քիչ արտադրողականությամբ, աճում է սխալ գործողությունների և դժբախտ պատահարների պոտենցիալ վտանգը: ՈՒսումնասիրությունները ցույց են տվել, որ վնասվածքների մինչև 5%ը կարելի է բացատրել անբավարար կամ ոչ ռացիոնալ լուսավորությամբ, իսկ 20% դեպքերում՝ նպաստում է վնավածքների առաջացմանը:Վերջապես, վատ լուսավորությունը կարող է առաջացնել պրոֆեսիոնալ հիվանդություններ:

Արտադրական լուսավորությունը կարող է լինել բնական, արհեստական և համատեղ: Արհեստականն իր հերթին լինում է 3 տիպի՝ 1.ընդհանուր 2.տեղային 3.կոմբինացված: Ընդհանուրը նախատեսված է ամբողջ շենքերի լուսավորության համար:Տեղայինը՝ միայն աշխատանքային մակերեսների համար: Բայց միայն սարա օգտագործումը արտադրական շենքերում արգելվում է: 3-րդը բաղկացած է 1-ինի և 2-րդի համատեղությունից:Սա առավել նպատակահարմար է կիրառել բարձր ճշտություն պահանջող աշխատանքներում: Պետք է աշխատողներին վնասազերծել լույսի աղբյուրների և արտացոլող մակերևույթների կուրացնող

ազդեցությունից՝ սահմանափակելով նրա փայլը:Փայլող մակերևույթները ունեն բարձր պայծառություն, որը առաջացնում է տեսողության ֆունկցիաների խախտում: Տեսողական ֆունկցիաների նորմալ վիճակի փոփոխությունը, որը առաջանում է տեսողական դաշտում պայծառ և փայլող մակերևույթների առկայության դեպքում, կոչվում է կուրություն:Փայլը կարող է լինել ուղիղ կամ արտացոլվել:ՈՒղիղ փայլը հիմնականում առաջանում է լույսի աղբյուրի կամ լուսավորող հարմարանքի ազդեցությամբ: Տեսադաշտում գտնվող չփակված լամպերը բերում են տեսողության արագ հոգնածության և աշխատանքի արտադրողականության նվազման:Արտացոլվող փայլը առաջանում է աշխատանքային մակերևույթներից,որոնք ունեն աշխատողի աչքի ուղղությամբ հայելային արտացոլանքի գործակից: Արտացոլվող փայլը նվազեցնում է դետալի և ֆոնի միջև հակադրությունը,առաջացնում է կուրություն և տանում է աչքի հոգնածության:



Փայլից պաշտպանվելու համար նվազեցնում են լույսի աղբյուրի տեսանելի մասի պայծառությունը՝ անթափանց արտացոլիչի կամ լույսը ցրող ապակիների օգտագործման միջոցով: Արտադրական լուսավորությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներն են՝ 1.արհեստական լույսը պետք է մոտ լինի բնականին, 2.լուսավորության մակարդակը պետք է բավարար լինի և համապատասխանի հիգիենիկ նորմերին,որոնք հաշվի են առնում տեսողական աշխատանքի պայմանները, 3.պետք է ապահովվի լուսավորության մակարդակի կայունությունը և համաչափությունը՝ տեսողության հաչախակի վերաընտելացումից և հոգնածությունից խուսափելու համար, 4.լուսավորությունը չպետք է առաջացնի ինչպես լույսի աղբյուրի,այնպես էլ այլ առարկաների փայլք, Պրակտիկան ցույց է տալիս,որ բնական լուսավորության մակարդակը զգալիորեն նվազում է լույսի ներթափանցման ապակեպատ մակերևույթների,պատերի և առաստաղների կեղտոտ լինելու հետևանքով: Դրա համար պետք է պարբերաբար( 1տ. ընթացքում 2-4 անգամից ոչ պակաս ) մաքրել ապակիները և կատարել առաստաղների ու պատերի սպիտակեցում:

### Հարցեր

1. Ինչպե՞ս է ազդում լուսավորությունը արտադրողականության վրա:
2. Ի՞նչ կապ կա լուսավորության և արտադրական վնասվածքների միջև:
3. Թվեք արտադրական լուսավորության տեսակները:
4. Նշեք լուսավորությանը ներկայացվող հիմնական պահանջները:

## Արդյուք 4.Առաջին օգնություն

**Թեմա4.1 Տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններ**

**Թեմա 4.2 Առաջին օգնության գործողությունների քայլերը**

**Թեմա 4.3 Արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնումը**

**Թեմա4.4 Արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վերականգնումը**

**Թեմա4.5 Այրվածքների նախնական մշակում և էլեկտրահարվածին առաջին օգնությունը**

**Թեմա4.6 Վիրակապում և անշարժացում տարբեր կոտրվածքների դեպքում**

**Թեմա4.7 Տարբեր թունավորման դեպքում առաջին օգնության կազմակերպումը**